



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 3

Տ Ր Ա Ր Ա Ր

15 ՅՈՒՆՎԱՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳՈՒՍՈՒՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղր.	Տարեկան	54 Ղր.	Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՑ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՅԱՌԱՑՈՒՄ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն րնել ՍԱՐԳԻՍՕՑ անունը կեղծող կարգ մը նորելուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը երջին :

ՍԱՐԳԻՍՕՑ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :


Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :

Հասր 40 փարս

(صاريان) مطبعة سى — باب على جاده سى ٣٨

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճասսէսի քիւ 38



COPIED FROM THE
ORIGINAL MANUSCRIPT
OF THE
HISTORY OF THE
CITY OF
NEW YORK
BY
JACOB LEVINSKY
PUBLISHED BY
J. LEVINSKY
NEW YORK
1850

THE
NEW YORK
PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION
1850



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՂ 3

ՇԱԲԱԹ

15 Յունուար 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եսգիտեմճիւնը (Խմբագրական). ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ. — Կը Բաղճայի՞ր. ՀԱՅ-ԿԱՆՈՅՇ ՄԱՌ-Բ. — Թ. փառաւիկ Աղչիկը (Նորայիկ). ԶԱԻԱՆ ՄՈՅՐԵԱՆ. — Զգուանք (Բանաս.) Օ. ՔԱՄԵԼԻԱ. — Զեմիք ու Նատիր (Կինը). ՌՕՄԱՆ. — Դիմագիտութիւնը (Կիներու Մասին). SERGINES (Թարգմ.) ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. — Պատրանքներ (Ոճանաւոր). ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՑԵԱՆ. — Ծաղիկները (Գեղօն). Վ. ՄՕՄՃԵԱՆ. — Ետտէ Ս. ԽՈՐԷՆ. — Առանցիմ Մատմագելը. ԼԻԼԱ. — Լուրերու Բաժին :

ԵՍԳԻՏԵՄՃԻՆԵՐԸ

Հիւանդութիւնը կամ ախտը ո՛չ թէ միայն մարմնական կամ ֆիզիքական յատկութիւն և բնոյթ ունի, այլեւ բարոյական տեսակէտով ալ գոյութիւն ունի ան, որուն բուժումը բժիշկներու հասկացողութենէն վեր է ու սէռօմը ան-ըստգիւտ :

Եսգիտեմճիւնը ընոյթ մըն է, աւելի, ինչպէս ըսինք, հիւանդութիւն մը, ուրկէ վարակուողները կամ ենթակաները ինքզինքնին կը բարձրացնեն այն-քան վեր, ուրկէ հստատ ու դռուղ նայուածքներ կը ձգեն, ինքնագով ակնարկ-ներ և իրենց համայնագէտի հովերը կ'ուղեն փչել մարդկութեան երեսին :

Ամէն բան գիտէ եսգիտեմճին, ամէն բանէ տեղեկութիւն ունի, չիկայ բան մը, չիկայ խնդիր մը որուն վրայ մօտէն, խիստ մօտէն ծանօթութիւն չունե-նայ ան, այլ ընդհակառակը ամէն ինչ խտացուցած կը զգայ իր borné մտքին մէջ և ամէն հարց իր մօտ և իրմով կը գտնայ լուծումը :

Այս ծաղրելի միեւնոյն ատեն ցաւալի հիւանդութենէն կամ ախտէն վարակեալները ընդհանրապէս ո՛չ կատարեալ ուսմունք, ո՛չ ալ կրթութիւն կունենան, այլ լոկ արտաքին ցոյց մը, շաւղթանութիւն մը դուրս կուտան և ատուկ կը պարծին:

Մեր գրական հորիզոնին վրայ չեն պակսիր այս կարգի մարմնուկ կանթեղներ, որոնք իբր թէ կը պլպլան ու իրենց հմտութեան լոյսը կը սփռեն, կ'ողողեն գրական աշխարհը ըստ իրենց մղչոտած գաղափարականին:

Ամէն խնդրոյ մէջ վարժ լուրորդներ են անոնք, ուր կը նետուին տաքարին, և ուրկէ հազիւ հազ գուրս կը քաշուին սմբած, խխում ու սարսուղին:

Չկայ խնդիր մը իրենց համար որուն վրայ ընդարձակ տեղեկութիւն չունենան, կը ճառեն, կը բացատրեն և ամուր կը պլլուին իրենց ծանօթ և անծանօթ բոլոր հարցերուն, առանց մանանելի չափ գիտակցութիւն կամ հմտութիւն ունենալու:

Այս առիբը կարգալով անշուշտ ձեր յիշողութիւնը պիտի խտխտացնեն այսպիսիները, և ձեր անձնական փորձառութեամբ պիտի հաստատէք մեր ըսածները: Չէ՞ք հանդիպած անոնց ձեր կեանքին մէջ, երբեք առիթը ունեցած չէ՞ք լսելու այս կարգի եսգիսեմճիները:

Սալոնի մը մէջ էք, ամէն դասակարգէն անհատներ, ներկայացուցիչներ հաւաքուած ընտանեկան երեկոյթ մը կը սարքեն, ու հոն՝ այդ անուշ մթնոլորտին մէջ կը պատահի որ նիւթ մը, հարց մը, խնդիր մը խօսակցութեան առարկայ կ'ըլլայ. ներկաները իրենց զարգացման աստիճանին համեմատ կարծիքներ կը յայտնեն և, ահա անդիէն եսգիսեմճիին մէջտեղ նետուելով՝ կը սկսի փատտաբանել, վճիռներ, կարծիքներ դուրս տալ, և այն ամէն փեղցիկեղութիւնները որոնցմով լեցուն է իր գանկը: Ներկաները պահ մը թէեւ կը յափշտակուին, կը հաւատան իր խօսքերուն, սակայն ինչպէս բաց օդին մրրիկը կը յաշորդէ, անոնք ալ մեր գաղափարները կը սկսին ամպոտել, մթագնել, ու տակաւ դատարկութիւնը, աննպատակ փաստերը, անհիմն ու անյատակ կարծիքները շուտով երևան կ'ելլան, ու ինք, այսինքն այդ խղճալի արարածը, խաղք ու ծանակ կ'ըլլայ չկրնալով ելլել այն նիւթին մէջէն, ուր նետուած էր պահ մը՝ իբր թէ կատարեալ գիտակցութեամբ:

Ամէն բանի մէջ ասանկ:

Գրական նիւթ մը կը ծեծուի մէկ քանի անձանց միջև, կարծիքներ կը փոխանակուին, և ահա իրենցմէ մին, եսգիսեմճիութենէ վարակուած, խօսք կ'առնէ ու կը սկսի ցատկաւոր ճոռոմաբանութիւններով քիթ չքաշել խօսքի նիւթ եղող խնդրոյն և յայտնուած գաղափարներուն առթիւ, ինք բարձր է, վեր ու գերիվեր, հմուտ ամէն նիւթի ու ալ ծորակը կը բացուի, «ես գիտեմ», «ես կը ճանչնամ», «մօտէն գիտեմ», «տէր ողորմեա՛յ . . .», «կարելի բան չէ», «ոչ մէկը ինծի չափ կրնայ տեղեակ ըլլալ ասոր» և նմանօրինակ ինքնագովասանքներով կը ջանայ, կը տքնի, կարելին ի գործ կը դնէ յաղթելու, համոզելու իր ընկերները, որոնք կը ծիծաղին, կը խնդան և կամ կը կարեկցին իր վրայ:

Ասոնք և այս կարգի անհատները հիւանդներ են, բարոյապէս տկարներ, որոնք իրենց ախտին գիտակցութիւնը չունին դժբաղդաբար, իրենք չեն գիտեր իրենց այս վիճակը, չեն զգար, բայց դուրսէն շատ լաւ կը տեսնուի իրենց այս խզճալի կացութիւնը:

Շատեր կը պնդեն թէ այս ունակութեան առաջը առնելը կամ բուժումը ենթակային երեւոյն տալն է, թէ ամէն ժամանակ պէտք է իրենց այդ զաղկոյթ բնոյթը զարնել երեսնուն, խպնեցնել, ամօթել՝ որպէս զի այդպէսով կարելի ըլլայ մոռցնել տալ, հեռացնել իրենց այդ տխուր վիճակէն: Ոմանք ալ յորդորելով, անուշելով և խրատելով կարեւորութիւն կը տեսնեն ու յաջողութիւնը այդ սխաբեմին մէջ կը գտնեն:

Ուրիշներ ծաղրը կը նախընտրեն, քաշքշուքը և խնդուքը ա'լ աւելի բուժիչ կը դասեն այդպիսիները ուղղութեան բերելու համար:

Սակայն պէտք է ըսել որ ո՛չ մին, ո՛չ միւսը հիմնովին կրնան աղատել ենթական, այդ փորձերը բոլորն ալ ապարդիւն կը մնան և թէ կարելի է ալ աւելի մղում մը, զարկ մը տուած՝ կ'ըլլան այդպէսով և արդիւնքը նոյնը կը մնայ: Պէտք է կարելի եղածին չափ հեռու կենալ այդ վարակուածներէն, ինչպէս կ'ընենք ո՛ր եւ է տարափոխիկ հիւանդութեանց առթիւ, պէտք է կողմացնել զանոնք ընտանեկան և ընկերական մթնոլորտէն, տեղի չիտալ իրեն, որպէս զի բերաններ լարեն ինքնագոյութեան, եսգիտեմքութեան համար, այն ատեն ենթական առիթը չգտնելով գործադրելու իր սովորած փորիկ ունակութիւնը, ստիպեալ, իր առանձնութեան մէջ տակաւ պիտի մոռնայ, պիտի թօթափէ իր ախտը և այսպէսով օր մը անզգալապէս պիտի հրաժարի այդ բնոյթէն:

Մարդ պէտք է միշտ գիտցածը իրեն վերապահէ և ի հարկին դուրս տայ գիտցածը, և ոչ թէ չգիտցածը յումպէտս դուրս տայ ու իր վրայ հրաւիրէ ունկնդիրներուն քրքիչը, խնդուքը ու ծաղրը:

Ահա ինչո՞ւ ըսուած է՝ խօսիլը արժաք է, իսկ յոռիքը ոսկի:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը վերջնապէս որոշած է դադարեցնել թերթերու առաքումը ամէն անոնց, որոնք հին Լոյսէն հաշիւ ունին անվճար: Ասիկայ թէև այդ կարգի անհատներու պատուարներ կարգադրութիւն մը չէ, սակայն միեւնոյն ատեն իրենց կողմէ ալ ոչ նուազ անպատուարեր է ամիսներով թերթ ստանալ և փոխարժէքը չհասցնել օրը օրին: Նաև Հանրագիտակի առաջին թիւէն բաժանորդագրութիւն ուղղողներուն՝ մի անգամ ընդ միշտ կը զեկուցանենք թէ ապառիկը բոլորովին վերցուցած ըլլալով՝ ԿԱՆԽԻԿԻ դրութիւնը պիտի յարգուի առանց բացառութեան և թէ, «Առաջին թիւը ստանալնուս՝ կը փութանք բաժնեգիրը զրկել» ըսող և կամ նմանօրինակ նամակներով մեզ եղած դիմումները անպատասխանի պիտի մնան: Բաժնեգիրը ուղղակի մեր հասցէին Օսմ. Մանտաբոսթով և կամ քսան փուլը քսան զրուշի հաշուով նամակատան դրոշմաթղթով պէտք է զրկեն անոնք՝ որ կ'ուզեն բաժանորդագրութիւն ՀԱՆՐԱԳԻՏԱԿի:

ԿԸ ԲԱՂՁԱՅԻՐ

(ՍԴՐԵՐՓ)

Առ Պ. Ա.

Խաղաղ ու ջիւն լըճակին մեջ սա հեռում,
Զոր գարնային գով գեփիւնը դողողուն,
Կը գգուէ մեղմ, նագանքներով սարսուռն,
Կաթիլ մ'ըլլալ կը բաղձայի՞ր :

Կամ քառուտի մը խորն անեղ, սքգաստուեր,
Ուր սոխակին ձայնը շատոնց է լըռեր,
Ուր փայլ կուտան անուին լուսինն ու ցոլքեր,
Ծաղիկ մ'ըլլալ կը բաղձայի՞ր :

Կամ երբեքին տակ աստուան ջիւն ծախի,
Ուր դալկահար լուսնի մահիկն կ'անհետի,
Նուրբ ժանեակէ քողի մը տակ լուսաբփի
Աստուայ մ'ըլլալ կը բաղձայի՞ր :

Մեր գեղանի Վոսփորին ծոց մարգարտէ,
Ուր արեւը պրիսմակէ կը շողէ,
Ուր կեանքն անուշ է խրնկաւետ երազ մ'է
Կոհակ մ'ըլլալ կը բաղձայի՞ր :

Արշալոյսին դեռ նոր բացուած վարդին ծոց
Շէկ քերթերուն՝ որ կ'արձակեն սիրոյ բոց,
Ուր կը բլրոջին հեշտ երազներն սիրայնոց,
Յողիկ մ'ըլլալ կը բաղձայի՞ր :

«Զէ՛, ես կատեմ կոհակ, ցող, վարդ կամ մացառ,
Որ չունին հմայք, խորհուրդ ու սեր ինն համար,
Բայց մարմարէ լանջքի մը տակ սիրահար,
Սի՛րտ մը քլլալ կը բաղձայի՞ »

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՈՒՐ

ՓԱՇՏՈՆԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Գոհութեամբ կ'իմանանք թէ, թերթիս
Տնօրէն Խմբագրին հօրեղբայրը, Վսեմ. Խաչիկ
էֆէնտի Փափագեան, որ Արտաքին Գործոց
Նախարարութեան հաշուակալութեան
սենեակին Ա. քարտուղարն էր, այս անգամ
նոյն դիւանին Տնօրէնութեան պաշտօնին
բարձրացած է :

Մեր ջերմ շնորհաւորութիւնները կը փո-
թանք յայտնել Վսեմ. Խաչիկ էֆ. Փափագ-
եանի, իրեն վիճակած այս արժանի գնա-
հատումին առթիւ :

ԹԱՓԱՌԻԿ ԱՂՁԻԿԸ

Դեռ նոր ձգած էր վարժարանը՝ խնամ-
քոտ կրթութիւն մը առնելէ ետքը, երբ տա-
րաբաղդ հայրիկը գործերու յաջողական
ձախորդութիւններէն ծայր աստիճան թըշ-
ուառացած վերջ կուտար կեանքին՝ անօգ,
անպաշտպան ձգելով զինքը, իր մայրիկին
հետ :

Թշուառ աղջիկը իր ազուրուրթեան կա-
տարելութեան մէջ, տարիք մը ուր մտնող
ամէն աղջիկ արքունքի գեղեցկութեան հա-
սունութիւնը կը ստանայ, ստիպուած էր հը-
րաժարի իր հասակին անբաժան բոլոր հա-
ճոյքներէն, բոլոր գուարճութիւններէն,
կուրծք տալու համար հացի անողոք պայ-
քարին, որ արհաւիրքով լեցուն ուրուակա-
նի մը պէս, կուգար, կը մտնէր շուտափոյթ
քայլերով, իրենց նիհար տնակը՝ սուգի լա-
ցուկոծի օրերէն անմիջապէս հտքը :

Գեղանի աղջիկը, զպրոցին մէջ սովորած
համեստ կարուձեւին շնորհիւ, ափ կ'առնէր
հիմա մկրատն ու ասեղը, և գիշերը ցորե-
կին խառնած, կ'աշխատէր անդուլ, անդա-
դար՝ իր ուռուցիկ կլոր դէմքին օրստօրէ-
ական հալումային, վարդ կարմիր՝ այտե-
րուն աստիճանաբար գունաթափումին և
սուր ու գրաւիչ նայուածքին նուաղումին
զոհաբերումովը մայրիկին ու իրեն օրապա-
հիկը ձարելու :

Իր մկրատին յաջող արտադրութիւննե-
րը, մանաւանդ՝ ձեռագործին նուրբ, մա-
քուր ասեղնաշարը քիչ ժամանակի մէջ այն-
քան շուտ գնահատուիլ սկսած էր որ խընդ-
րանքը կ'աւելնար օր օրի և քաղաքին հա-
րուստ ընտանիքները այդ աշխատութիւն-
ները գնելու մասին իրար գերադանցել կը
ջանային : Կարող աղջկան աննման ազուր-
ութիւնը, պատուախնդիր վիճակը ու հա-
մակրելի բնաւորութիւնը իր վարպետի համ-
բաւին հետ ընտանիքներու մէջ խօսակցու-
թեան նիւթը եղած էր հիմա, ու քաղաքին
ամէն դասակարգի երիտասարդութիւնը
թիթեռնիկներու պէս բոլորտիքը դառնալ
սկսած էր այդ գեղատեսիլ ու հազուագիտ
ծաղկին :

Այդ երիտասարդներէն մէկը մանաւանդ, ազնուական սերունդէ, այնքան տաք վերաբերում մը ցուցուցած էր անոր հանդէպ, եւ այնքան վառուած անոր սիրով, որ երբ փոխադարձ սէրը խնդրեց չքնաղ կարուհիին՝ անձին նուիրաբերութիւն խոստումով, դեռատի աղջիկը չկրցաւ անտարբեր մնալ և տեղի տուաւ իր մէջը արթնցող նմանօրինակ բոլուն զգացումներուն:

Օր մըն ալ լուր ելաւ քաղաքին մէջ թէ մանկամարդ կարուհին անյայտացի էր:

Երիտասարդ ազնուականը մօտալուտ գիւղի մը մէջ իր հօրենական կալուածներէն մէկը տարած էր զայն, որ հիմա իր սիրահարին երջանկաբոյր գրկին մէջ, երանաւէտ ամուսնութեան մը հեռանկարովը հմայուած՝ մոռցած էր ամէն բան, մինչեւ անգամ անօգ, թշուառ մայրիկը: Առջի բերան յուսացած էր որ իր սիրահարին ծնողքը հաճամիտ պիտի գտնուէին այս ամուսնութեան: Բայց ի զո՛ւր սպասած էր երկար ատեն այդ բարեհաճութեանը. բարձր դասու, ազնուականի գոռոզութիւնը բանի մը տեղ չէր դրած աղքատիկ աղջկան մը անղուզական առաւելութիւնները, դիրքի, աստիճանի անհաւասարութեան ձանձրացուցիչ առարկութիւնները հակում մը առաջ բերած էին երիտասարդ ազնուականին սրտին մէջ դէպի ծնողական բաղձանքները, ու գեղեցիկ կարուհին կուսած էր ատիկա:

Երիտասարդը կը զգար սիրուհիին հոգեկան տառապանքը, ու կը փափակէր ամէն ինչ զոհել անոր սիրոյն համար՝ սակայն՝ այդ անդրդուելի աղջիկը չէր համակերպեր. իր մեծ սիրտը չէր կրցած տոկալ իր սիրահարին ծնողքին անտեղի լծախնդրութիւններուն:

Երկար միջոց մը անցաւ երկու սիրահարներուն տեղափոխումին վրայ, ու վիճակը մնաց անփոփոխ:

Երիտասարդը պարապ տեղը ջանաց կնացնել հրապուրիչ կարուհիին: Ան՝ միշտ ծնողքին համակերպումը փնտռեց:

Օր մըն ալ ազնուական երիտասարդը սա նամակը կը կարդար.

Սիրելիս,

«Իմ խոնարհ վիճակս չթողուր եղբր որ Գեղի հետ ամուսնանալով երջանիկ բոյն մը

կազմենք. ես արժանի չեմ եղբր Գեղի կին ըլլալու, ու սիրասուն զաւակներ ընծայելու քեզի. ուրեմն մոռցի՛ր զիս և ծնողքիդ փառփաքներուն գոհացում տո՛ւր. մնաս բարո՛վ: Աստուած երջանիկ ընէ քեզի:

Քոյդ

ՍԻՐԱՆՈՅՇ»

Անհետացող աղջկան այս յուզիչ նամակը շատ գէշ ազդած էր երիտասարդին սրտին. որ հիմա աչքերը արցունքով լեցուած, սիրտը ուժեղ բաբախել սկսած, ասդին անդին կը վազվըուէր գտնելու, ետ դարձնելու իր սիրոյն միակ առարկան: Իր բոլոր ճիգերը ապարդիւն ելան սակայն. ամբողջ ագարակին ու պարտէզին մէջ անոր հետքն ա՛նգամ չգտաւ: Մերձակայ անտառը խոյացաւ, ծառերուն, ծաղիկներուն հարցուց զանի. բայց անոնց և ոչ մէկը կրցաւ բան մը ըսել անոր մասին: Իր յիմարական, խօշ վազվըուութիւն մէջ կանգ առաւ միջոց մը և ձայնին բոլոր ուժովը կանչեց,

—Սիրանոյշ...

Դիմացի լեռէն եկող ձայն մը նոյն անունը տուաւ.

—Սիրանոյշ:

Բայց այս ձայնը իր սիրուհիին ձայնը չէր: Դժբաղդ սիրահարը վշտաբեկ ու յուսահատ ագարակի դարձաւ նորէն:

* * *

Սիրանոյշ իր մօրենական տունը դարձած ատեն մեռած գտած էր տարաբաղդ մայրիկը: Թշուառ կինը իր մէկ հատիկ զաւակին, իր ապրողստի միակ միջոցին անյայտացումին չէր կրցած տոկալ: Գեղանի աղջիկը իրարու յաջորդող այս կրկնակի դժբաղդութիւններուն վրայ բոլորովին ուժաթափ, շուարեր մնացեր էր: Անցած օրերու վշտառիթ յիշատակը, ներկային տխուր անստուգութիւնը վաղահաս ծերութեան մը կնճիռները կը բերէին իր դէմքի գեղափայլ պայծառութեան վրայ: Քաղաքին ամբողջ բնակչութիւնը անբարոյ ու հեշտամոլ աղջկան մը վերաբերումը ունեցած էր իրեն նկատմամբ, քանի որ անձանթ երիտասարդի մը հետ փախչելով մայրիկին գլուխը կերած էր: Սիրանոյշ շատ դառն կերպով կը զգար հիմա իր գործած սխալին մեծու-

Թիւնը, ինք իբրեւ պատուախնդիր աղջիկ, հաճոյք վայելք ամէն ինչ գոհած և երկար ատեն կրցած էր պահել իր կուսական հաւրաստութիւնը ու հիմա իբրեւ հաճոյամով աղջիկ մէ մեզ աղբորով... Ռ'հ, շատ ծանրը, շատ սեւ գտած էր մարդիկներու այս անողոք դատապարտութիւնը։ Ուրքէն մինչեւ գլուխը սեւերը մաած, ձգեց վերջապէս այս տեղերը, որոնք ա'յնչափ անոյշ և այնչափ դառն յիշատակներ ունէին իրեն համար, ու հեռացաւ, գնաց հոն՝ ուր որ իր քայլերը տարին զինքը։

Թափառիկ կեանքը է'ն սիրած բանը և դաժ էր հիմա այդ անփորձ աղջկան, որ առնական անվեհերութիւնով մը քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ անցած էր՝ միշտ անտարբեր, միշտ անզգայ բոլոր անոնց դէմ, որոնք ճամբուն վրայ իրմէն վարդ մը քաղելու անկալութիւնով իր խայթող փուշերուն կ'ենթարկուէին։

Ամառուան տաք օր մըն էր։ Թափառիկ աղջիկը երկար ճամբորդութիւնէ մը յոգնած, դադրած, ագարակի մը եզրը հասած էր։ Հոն, ցանկապատին քով նստած յոգնութիւն կ'առնէր, երբ պզտիկ մը, որ հոն ինքնիրենը կը խաղար, իր ակնարկին հանդիպեցաւ։ Սիրանոյշ քովը կանչեց այդ մատաղ սիրուն մանկիկը՝ անքան անոյշ, այնքան խանդոտ ձայնով մը որ, պզտիկը չթերացաւ փռթկոտութիւն ցուցնելու։ Մանկիկին սուր նայուածքը, դէմքին աղուորութիւնը հմայիչ աղմուկներուն մը ունեցան սեւեր հագնող կնոջ վրայ, երկար ատեն անոր երեսը նայեցաւ, ու կարծես թէ ճանշտորութիւն մը բերած ըլլար այդ պզտիկ դէմքին վրայ, մայրկենական դունաթափում մը ունեցաւ աչքերը մթադնիլ սկսան, անզգալաբար գրկեց, պրկեց անոր մարմինը՝ պինդ բազուկներուն մէջ և խանդակաթ մօր մը համարյոյններով ողողեց անոր անմեղունակ դէմքը։ Յետոյ ժողվեց ինքզինքը, ոտքի ելաւ, ակնարկ մը նետեց ցանկապատէն ներս, և յուզուած, խռոված վիճակի մը մէջ սա բռնորդ կովմաց։

— Ան է, ան ագարակն է. ու այս պզտիկը անոր դուստրը... :

Սիրանոյշ իր ենթագրութեան մէջ չէր փխալած. այդ ագարակը նոյն այն չէնքն էր ուր ինք տարիներ ընտալ եկած բնակած ու իր կեանքին է'ն երջանիկ օրերը անցուցած էր։

Անգամ մըն ալ գրկեց պզտիկը, սիրեց, պագաւ, կրկին սիրեց զայն և հազիւ լսելի ձայնով մը ըսաւ անոր ականջին։

— Տղա'ս, աղուո'ր տղաս, ես Սիրանոյշ մօրաքոյրդ եմ, ձեր երջանկութիւնը իմ թշուառութիւնս մոռցուց, իմ անունս տուր հայրիկիդ և բարեւ ըլ'է անոր... :

Ու մինչ սեւերով կինը կը հեռանար, պզտիկը ներս վազեց պարտեզէն ու գնաց հօրը քով, որ աւագանի մը եզրը նստած գառնուկ մը կը չոյէր։ պատմեց անոր ինչ որ ըրած էր սեւերով կինը և ինչ որ ըսած էր Սիրանոյշ մօրաքոյրը։

Մանկան պատմութիւնը ասգնտած էր երիտասարդին ամբողջ մարմինը։ Սիրանոյշ անունը մանաւանդ հին անոյշ յիշատակներ արթնացած էր սրտին մէջ, ցատկեց ելաւ նստած տեղէն ու դէպի սիրուն մանուկին ցոյց տուած կողմը խոյացաւ փնտռեց, տեսնել ուզեց անգամ մը իր երբեմնի խրոխտ Սիրուհին, որ ասանկ տարիներ ետքը մինչև իր դուռը եկած, իր զաւակը սիրած էր։ Ի գո'ւր փնտռեց սակայն այդ ուրուականը. Սիրանոյշ, այդ Թափառիկ աղջիկը անյայտ եղած էր։

ՀԱՒԱՆ ՄՈՅՐԵԱՆ

ԳԳՈՐԱՆԵ

Ա' զգուեցայ միօրինակ սիրելեմ,
Կուգեմ տաքեր կերպով մ'ըզբեզ վայելել,
Ա' կը գանձիմ շրթունքներեդ հրեղեմ,
Վարդ այտերեդ, լայն մագերեդ ոսկերել։

Հիմա ա'լ քու նագտնքեդ գիս չնմայեր,
Ու պըրանքեդ, պէվրկուանդ առօրեայ,
Առաջուան պէս չեն դիւքեր գիս անվեհեր,
Սիրքին անոյշ հըպանքքին պէս անցաւ նա։

Քեզ չեմ սիրեր առաջուան պէս մոլեգին,
Հին սերերը ճիւղերու պէս կը լուծուին,
Եւ հաճոյքի վայելքներէն բանկազին՝
Անուշագոյն ըղձա'նք մը կայ տակաւին... :

Վըսեմ ու վեմ խորհուրդ մը կայ սիրոյս մէջ,
Անհունին պէս շանքահարող, սեւադեմ,
Անոր նըման դժնե, անգութ ու անգերջ,
Ան՝ քեզ մաշելն է լուեյալի աքբիս դեմ... :

Օ. ԲԱՄԵԼԻՍ

ԶԵՆԻԹ ՈՒ ՆԱՏԻՐ

(ԿԻՆԸ)

Ամէն օր մեզի հետ ապրող, մեր ցաւերուն մեր տխրութեան, մեր ուրախ ու երջանիկ վայրկեաններու, այդ՝ կեանքի անբաժան հոգիներու յոյլ երամբ որոնք կան ու պիտի մնան միշտ մեր մօտ, չլուծուելիք առեղծոածներ են և անոնք չեն հերքուիր:

Հաշտ աչքով դիտեցէք պահ մը և պիտի չվարանիք երեք անոնց երկնային էակներ մը ըլլալուն զօրաւոր փաստերը ունենալ ձեր ձեռքը, երբ անոնք պիտի գտնէք իբր ձեր կեանքին ամբողջ շրջանին մէջ ձեզի հետ համակարծիք, սրտակից ու գաղափարի վսեմ զուգորդներ, միշտ անկեղծ ու հաւատարիմ:

«Էրիկ մարդուն կեանքին ամբողջը կադմոզ տարրը» կը յարէ Պոուստ, «առանց կրնո՞յ՝ կեանքին արշալոյսը և վերջալոյսը անգուարթ և անհրապոյր է» աւելցնելէն ետքը: Եւ կինը կը մնայ միշտ դրախտի վարդը՝ անուր հրապոյրներով պարտւում և առտուան զեփիւռը՝ էրիկմարդուն տառապանքի վայրկեաններուն մէջ, անոր հոգեկան տաքնապին կոտտանքը մեղմացնող ու անէացնող միակ սպիկանին ըլլալով:

Բանաստեղծը միշտ երգած է զայն ու ծաղիկները նախանձեր են անոր շրթունքներուն կեռաս կարմրութեանը վրայ: Թռչունները տենչանքը ունին անոր ձայնին նմանցնելու իրենց հեշտին ճուռողիւնը և երկինքի ցոլքերը գողցեր են անոր աչքերուն կախարդող հմայքը: Մայր յորջորջեր են զայն, զգացումներու բովանդակ հուրը վառուած գտնելով անոր սրտին մէջ: Բնութիւնը գուրգուրանք, սէր, անձնութիւն ըստեղծեր է անոր մէջ և մարդիկ՝ անոր սրբտին պեղումներէն դուրս քաշելով այդ ձիրքերը, ծաղիկներու երկներանգ պսակներ հիւսեր՝ ու կնոջ ճակտին վայեցուցեր են, իբր կնոջական բարձր կոչումին մարմնացումը դառնելով անիկա:

Մարդկութեան բարոյականի մակարդակը բարձրացնող, միակ տանջիւմի նշաններ

են զայն ու ընկերակալութեան ճակատագիրը՝ տարեր անոր ձեռներուն տակ նետեր են, ճշդելու՝ փթեցնելու և նուիրագործելու առաջադրութիւնով, ու կինը՝ սրբագործուէր է «Մայր» անունով և տարիներ, դարեր իրմով միայն փառաւորուեր են, անյուշատակ օրերէ ի վեր...:

Ծշմարիտ կնոջ բարձրացումը չէ՞ այս:

X

Բայց, երբ անոր կթոտ քալուածքը տեսան, հիւանդութիւններու ախտերու անհամար անուններ բարդեցին իր ճամբուն վրայ: Մարդուն կեանքը ապականող՝ փտեցնող տարրը ներկայացուցին զայն: Մանուկը խորշանք զգաց անորմէն և իրեն սնունդ տրուող կաթին մէջ ապականութիւն գտաւ: Բարոյախօս բերաններ ամէն կարելիութիւն ձեռք ձգեցին, նոր ու գալիք սերունդները հեռացնելու համար, ու բարոյականի ինկածութեան պատասխանատուն ընդունելով, անխճօրէն հալածեցին միշտ, իբր թշուառութեան ու փճացումի սոսկ սերմը:

Ու կինը՝ ընկճուած իր վիշտերէն թէեւ էն առաջ, տխուր ցաւերով տեսեր էր իրմէն փախչող հոգիները, բայց էրիկմարդիկներէն չեմ գիտեր որոնք խղճալով իր գետնաքարշ ու լքուած դիրքին — կ'ըսեն թէ՝ — երազանքի, ցնորքներու, պատրանքներու ու տարիանքի վերարկուն կը նետեն անոր մերկ ուսերուն, գէթ աստիճան մը պաշտպանելու համար ինքզինքը աշխարհիկ իր խօլ հրայրքներուն մէջ: Ու հիմա, անոր համար է որ անիկա կը տեսնուի մեր շուրջը: միշտ նոյն մշտերեր զանգուածը ներկայացնելով: Իրաւ, թէեւ իր աչքերուն խորք պայծառ հող զգացումի տարփոտ շողերուն հետ անբաժան, սակայն կեանքի իր ճակատագրին իր անունին ցուրտ անկումէն զգայալիկ լքուած դիրքի մը մէջ, ալ նախատինքի, ըստորնացնող հեղեղներ թափուած իր գլխուն: ԿՆՈՋ ԱՆՆՈՒՄՆ է այս:

ՌՕՄԱՆ

ԴԻՄԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

(ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ)

Դիմագէտներ կան որոնք կնոջ գէտ-
քը ուսումնասիրելու համար բերանը և կը-
ղակը քննելով բաւականացած են: Եւ այս
քննութեամբ հետեւեալ եզրակացութիւննե-
րուն յանգած են:

Չափաւորապէս մեղ չըթուենքերով,
վիրինը թեթեւ կերպով ցցուած, պղտիկ
բերան— պաղ սիրտ և կասկածոտութիւն:
Հանգարտ և մտածկոտ բնութիւն, հաշուուած
նախաձեռնարկութիւն, իր անձին վրայ իշ-
խելու կարողութիւն, աշխատութեան մէջ
համբերութիւն, հպարտութիւն. ծածուկ
փառասիրութիւն:

Պինդ և հաստ չըթուենքերով բերան—
նիւթական բնազդներ, բանի մը անձնուի-
րութեամբ և նախանձոտ կերպով յարում:

Անկիւնները քիչ մը վար ելած, հաստ
չըթուենքերով գոց բերան— մեղամաղձոտ
բնութիւն, պաղ երեւոյթի մը տակ ամփոփ-
ուած եռանդ, գաղտնի անհանգստութիւն-
ներ: Մտածկոտ, լուռ, ինքն իր վրայ ծալ-
լըւած: Տառապող հոգի, եայլն, եայլն:

Հիմա կղակներուն անցնինք:

Կլոր, մէջտեղը պղտիկ փոսիկ մը ունե-
ցող կզակ — կամքի տկարութիւն, հաճոյքի
և անուշեղէններու համար մեծ յօժարութիւն
(թող ամուսնացած այրերը, իրիկուան ժամը
չորսին ատենները կարկանդակաւ ձառնին
հաշուեցուցակէն զգուշանան): Միւղիքի,
մանաւանդ երգի և պարի սիրահար: Տան-
տիկնութիւն՝ բնաւ, գէշ խոհարարուհի:
Բարի սիրտ, բարեկամներու համար հաճոյա-
կատար, բայց անձնական քմահաճոյքին
հպատակող և երբեմն երեսը թթուեցնող,
բէն ընող:

Պղտիկ փոսիկով կլոր կզակը հրապուրիչ
չէ: Փոքր և նուրբ ցցուած կզակ — Որոշ
կամք, աւելի երեւակայութեան մէջ քան
թէ սրտով: Երեւալու, ցուցադրելու փափաք:
Աշխարհիկ անապարձութիւններէ հաճոյք
զգացող (անոնք զինքը չեն գոհացնիր սա-
կայն): Չգայնոտութեան և գործնական ու-
գի խառնուրդ: Քմահաճոյքներ: Նախանձ!
Կին մը որ իրեն կենակցողները զժաղդ

պիտի ընէ և որ, սակայն, իր պէրանքովը,
իր նազանքովը և աւրժն մը վարելու ար-
ուեստովը՝ փառասէր ամուսնոյ մը նպա-
տակներուն պիտի լաւ ծառայէ:

«Նուրբ ցցուած» կզակը մեղի քիչ մը
մտածկոտ կը թողու!

Բայց, ահա հողատէրի, հաստատօրէն
գծուած կզակը — յամառ կամք, յարատե-
ւութիւն: Կին մը որ փոփոխական humeur,
աղղու և շտապող բնութիւն ունի. կասկա-
ծոտ նկարագիր, ներքին անդորրութեան
պակասութիւն: Ամփոփ և երբեմն պայթե-
լու պատրաստ զգայուններ: Լաւ տանտի-
կին, աշխատասէր, յոգնութեան տոկացող
բայց կուսազան բնութիւն ունեցող կին:

Շիտակը ըսելով, ասոնք շատ անգաղտ-
նապահ կղակներ են:

Կարգուելու պատրաստուող երիտասարդ-
ներ, ձեր խօսեցեալներուն կղակին նայելու
չմոռնաք:

SERGINES (Annales)

(Թարգմանեց)

ՄԻԲԱՅԷԼ, ՆԱԼ.ՊԱՆՏԵՍԱՆ

ՊԱՏԲԱՆՔՆԵՐ

Արշալոյսի նշոյլին տակ,
Վարդի կարմիր թերթին վրայ՝
Կաթիլ մը ցօղ կը պըլպըլայ:

Մօայլ ու մութ գորշ ամպերու,
Խորհրդաւոր ծայրերուն մէջ՝
Յոյսի նշոյլ մը կը մարի:

Ցասկոտ, փրփրած կռակներու
Յոյգերով լի խաւերուն մէջ՝
Փունջ մը մրմունջ կը նուաղի:

Աչքերուս լուրք ծոցին մէջը,
Տառապանքի ու պատրանքի՝
Աղի-արցունքը կը լիայի:

Սոխակին խօյ գեղգեղանքին,
Ու գեփիւնին երգերուն մէջ՝
Հծծիւններու խառնուրդ մը կայ:

Եւ յուսալսաք իմ կոյս սրտիս,
Սիրոյ քրքուն խորշերուն մէջ՝
Անեայող քա՛րժ իղձեր կան:
Ս.Ն.ԴԻՍՆԷԼԻ ԵՍԱՅԵԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐԸ

(ԳԵՂՕՆ)

I

Առտու էր :

Ու երբոր դալկոտ աղջիկը ելաւ և բացաւ պատուհանը , տեսաւ որ՝ ծաղկետունկին լերկ ճիւղերը պծնուեր էին ծաղիկներով : Բայց այս ծաղիկներ՝ որոնք աչքերը կը խտրատացնեն իրենց անխառն աղբոսութիւնով և որոնք՝ սիրտեր կը գրաւեն իրենց հմայիչ գեղեցկութիւնով :

Աղջիկը պատուհանին առջեւ կայնած , սկսաւ դիտել աստնք , և երբ հեշտանքով մը կը նայէր , իսկոյն ժպիտ մը արտաբայեցաւ դալկոտ երեսին վրայ , երբ տեսաւ այս երկնապան ծաղիկները , որ կը չոյուէին առտուան սիւքէն , և որոնք կարծես թեւաձեւ լով թռչել կ'ուզէին անտունութեան մէջ :

Ու այդպէս բաւական ատեն կայնելէ վերջ , նայեցաւ որ չպիտի կշտանայ դիտելով , գոցեց պատուհանը ու վար իջաւ աւելի մօտէն դիտելու համար աստնք , որոնք ժանեակներու հանգոյն կը վէտվէտէին ճառագայթող արփիին ոսկի ցանցերուն ներքեւ : Աղջիկը սկսաւ ակնապիշ դիտել այդ ճիւղիւն վրան նրփահիւսուած ծաղիկները , որոնց վրայէն այգուն ցօղերը գեւ նոր կը կաթկըթէր արցունքի մը նման , չիթ առ չիթ :

Բաւական ատեն հոն կայնեցաւ : Ոտքերը անքնթիթ յառած լուռ դիտեց :

Նա բուրբումաւ տունկին առջեւ կեցած սկսաւ երգել սա՛ մեղեդին :

— «Ո՛վ իմ ծաղկետունկս , քու ճիւղերդ որ լերկ էին , չունէր այն հմայքը , գոր հիմակ ունիս , արդեօք գիշերուան խորհրդաւորութենէն աղդուեցա՞ր , որ ճիւղերուդ վրայ պծնեցիր այսքան գեղեցիկ ծաղիկներ , որոնք իրենց անբռնութեամբ կը զգլխեն զիս :

«Դուն ո՛վ ծաղկետունկ , միշտ պիտի պծնադարդես այսպէս ծաղիկներով քու լերկ ճիւղերդ որպէս զի ես գամ քու առջիդ և իմ երգերս ըսեմ ամէն ատեն . . . »

«Դուն որ միայն տերեւներով գոցուած էիր ասկէ առաջ , չէիր աղդեր ինձ հաճոյք , ընդհակառակը քու վրադ նայելով ես աւելի կը տխրէի . . . » :

Ու աղջիկը այսպէս ըսելէ վերջ , գնաց իր սենեակը ու հոն առանձնացաւ , հոն՝ իր երգը ըսելու համար , որովհետեւ սիրտին բերկրութենէն չէր կրնար ալ զսպել ինքզինքը . . . :

II

Կէս օր եղաւ :

Դալկոտ աղջիկը դարձեալ բանալ ուղեց պատուհանը դիտելու համար նորէն ծաղիկները , որոնք առտուն զինքը այնքան հմայեց էին , նայեցաւ անոնց վրայ , բայց այս անգամ անոնք իրենց բոյրը կորսնցուցած ու քիչ մըն ալ թառամեր էին , գլուխին դէպի վար հակած . աղջիկը չատ տխրեցաւ այս ծաղիկներուն վրայ նայելով , ու չիտակ տունկին քովը գնաց , իր տխուր խօսքերը մըմնջելու անոր առջեւ :

Ու հոն կայնած սկսաւ երգել իր ցաւին նոպարին մէջէն ցաւոտ երգ մը , տխուր , տըխուր :

«Ո՛վ իմ ծաղկետունկս , ինչո՞ւ այսչափ չուտ կտրեցիր քու զօրութիւնդ տալ այս ծաղիկներուն , միթէ այսքան վա՞ղ պիտի թառամեցնէիր զանոնք : Ո՛վ ծաղկետունկ , ու՞՞՞՞ տուր անոնց , որ բուրեն իրենց բոյրը , մի՛ թառամեցնէր անոնք , որպէս զի միշտ քեզի գեղօններ երգեմ :

«Բուրեցէք , աղուոր ծաղիկներ , ձեր անուշ բոյրը , ու մի՛ փոխուիք ձեր գեղեցկութենէն , այլ միշտ նոյնը մնացէք . . . » :

Եւ գլխահակ մեկնեցաւ :

III

Իրիկուն եղաւ :

Աղջիկը չունէր այլեւս այն ուրախութիւնը , որ առտուն փայլեր էր իր երեսին վրայ , որովհետեւ այն ծաղիկները զոր կը պաշտէր , այս անգամ գետինն էին թափեր :

Ու չատ լացաւ . . . : Լացաւ անոր համար՝ որովհետեւ ալ չպիտի ըմբոշխնէր այդ բուրբումները ու չպիտի տեսնէր տունկը ծաղիկներով պծնուած , այլ պիտի տեսնէր անոր ճիւղերուն վրայ միայն քանի մը փոքր տերեւներ որ ծաղիկներուն հետքը կը գոցէին : Ու հիմակ սուգը մտած էր , որովհետեւ չունէր այլեւս անոր մատուցանելիք երգեր , որոնք զինքը կողեւորէին :

Ու երեսը ձեռքերուն մէջ գոցած , սենեակ վերադարձաւ , հոն իր լալօնքը մըմնջելու :

Վ. ՄՕՄՃԵԱՆ

Ե Ա Տ Է Ս :

Շոգեկառքը դեռ նոր մեկնած էր կայարանէն սուր ու խորունկ ճիւղեր արձակելով, դուրսը ամէն կողմ ձիւնով ծածկուած էր, բայց ինչ պէտք ունէի դուրս ելնելու, գրառագանիս առջեւ անհամբեր հետաքրքրութեամբ մը թղթատելու սկսած էի «Հանրագիտակ»ի առաջին թիւը, նախ աչքէ կ'անցընէի մի առ մի հոն պատկերացող ծանօթ դէմքերը, որոնք, բաց ի թօշիկեանէ, (գոթաղդաբար) անձամբ ճանչնալու առիթը չէի փախցուցած, սակայն ինչ մեղքս պահեմ, այս անգամ երեք տարուան կարօտս պիտի աւնէի «Լիւա»էն, սիրելի բարեկամէս որ «Լոյս»ին վերջաւոյսովը ծանոյց արգէն թէ զինքը երկար ատենէ ի վեր կարդացող բազմութեան հաճելի surprise մը պիտի բնէր: Անոնք որ քարափը շոգեհաւը՝ կամ կայարանի մը մէջ կառախուէրը սպասող բազմութեան մը անդամակցելու առիթը ունեցած են, կը զգան անշուշտ թէ ինչ քաղցր տպաւորութեամբ կը լեցուին ազգականի մը, բարեկամի մը սիրելւոյ մը գիրկընդխառնումին ակնառոտ ըլլալով. նմանօրինակ անհամբերութեամբ մը կը սպասէի չորեքշաբթի օրուան. երեւակայեցէք որ 950 քիլօմէթրօ հեռու կը գտնուիմ «Հանրագիտակ»էն, ամբողջ երեք օրուան ճամբայ է Պաղատաի երկաթուղւոյ գիծին point terminus կայարանը. անկուշտ փափաքով մը զինքը կը փնտռէի, «Լիւա»ն. չմոռնամ ըսելու որ շնորհիւ կարգ մը օթլախճի բարեկամներու թերթին էջերը զմեզիով կտրելու ծանձրոյթէն փրկուած էի (վասն զի արգէն անոնք ճամբուն երկայնքին վրայ կտրուած էին վարժ ձեռքերու մէջ) ու հազիւ թէ ինքնիրենս ուրախութեան ճիւղ մը պիտի արձակէի, գլուխս վերցնելով երկու անձերու դէմը գտայ ինքզինքս, անոնց դռնէն ներս մտնելը չէի տեսած:

—Անկէա իմ քոյրս է Պարոն, ըսաւ, տարբեր լեզուով մը, դեղնորակ մարդը, իրեն ընկերուհիին դառնալով՝ որուն հակա-

ռակ մուշտակներու մէջ փաթթուած ըլլալուն միւս մը ըլլալը անմիա դէմքէն յայտնի էր, ո՛ր թողունք մանաւանդ այր մարդուն արտասանելու եղանակը, որ իսկոյն մասնեց իրենց Անգղիացի ըլլալը:

Տոքթոր Տատ, զոր չուշացայ ճանչնալու, կարծես գուշակեց Անգղիերէնէ բառ մը անգամ չհասկնալս ու սկսաւ Թուրքերէն խօսիլ, իսկ քոյրը ուսուցչուհի Սկիւտարի Ամերիկեան վարժարանին, որ ոչ իսկ Թուրքերէն գիտեր, միշտ կը պատասխանէր թեթեւ ժպիտով մը. օղափոխութեան համար կեսարիա եղբօրը քով մի քանի ամիսներ անցընելէն ետքը, Պօլիս կը վերադառնար. ցուրտէն սառածի պէս փայտացած՝ քիչ մը ջերմոցին մօտենալով տաքնալէն ետքը, Տօքթօրը պատմեց թէ, — Նրեք օրուան անտանելի ճամբորդութենէ մը ետքը ուրախ էր վերջապէս երկաթուղւոյ կայարան մը հասնելուն, և որովհետեւ օրը կը տարածուէր ու ձմռան սաստկութենէն անկարելի պիտի ըլլար իրենց ճամբան շարունակել մինչեւ էրէյլի, (10 քիլօմէթր Պուլկուրուէն) յաջորդ օրը անկէ խրկելու համար իր քոյրը, հետեւաբար նոյն գիշերը անցընելու սենեակ մը կը խնդրէր, բան մը որ չզլացուեցաւ անշուշտ մեծահամբաւ Տօքթօրին:

Իրիկուան միասին ճաշեցինք, սեղանին վրայ տեսնելով հաւին Եատեւի ոսկորը, pour ainsi dire, Տօքթօրին ձեռքը. ընական ու քիչ մըն ալ չափազանց հետաքրքրութեամբ չարցուցի թէ, Անգղիոյ մէջ ալ տարածուած էր Եատեւ քաշուելու սովորութիւնը. Անմիջապէս քրոջը թարգմանեց հարցումս ու ինծի հաստատական պատասխան մը տալէն ետքը, քոյր ու եղբայր իրարու երես նայելով ծիծաղիլ սկսան, բան մը որ աւելի եւս հրահրեց հետաքրքրութիւնս և կրկնակի աղաչանքս չգիմանալով, հետեւեալ պատմութիւնը ըրաւ:

Այն ատեն Լիւրբուլ կը ընկալէինք, ուսանողութեան չրջանին մէջ էր տակաւին բարեկամս Էտուար. իր հոգեին թափովը կը սիրէր ու կը պաշտէր իրենց գրգռման ու

Ի որդի Xը, որ վերջապէս մերժուեցաւ իրեն հեղճ տղան ամէն արաւելութիւն ունէր բացի դրամէն, որ միակ պատճառը եղաւ չյաջողելուն իր սիրոյ մրցումին մէջ։ Աղջը-դ կան հայրը կոչու ու կոպիտ, ընչամոլ մարմը, գուշակելով էտուարին իր անդրանիկ ու մէկհատիկ աղջկանը հետ ունեցած չափազանց մտերմութիւնը, տխուր ապագա մը, անկուտութենէ յղացող ս ս յ ս յ ի ապագայ մը երեւակայեց և իսկոյն նշանեց իր աղջիկը հարուստ գործարանատիրոջ մը ապուշ զաւկին հետ։ Բառին լայն նշանակութեամբը անդաստիարակ էր ու բթամիտ. բայց դրամը? «Ոսկիներու ճամբուն վրայ» քալող տղուն ո՞ր հայրը աղջիկ չէր ու գեր պալ։

Շատ արցունք թափելէն ետքը՝ վերջապէս օրիորդ X համակերպեցաւ իր հօրը կամքին յուսահատ։ Էտուար փոխանակ յուսահատութենէն անձնասպանութեան ճամբան ձեռք առնելու, որոշեց, մեկնիլ Անգլիոյ հողէն, հեռուէն սիրելու համար իր հոգեհատորը ու ապրիլ անոր յիշատակներով։ Օրին մէկը իր այս ծրագիրը յայտնելով, վերջին հրաժեշտի ողջոյն մը տալու համար օւղիակի Օր. Xին առնը գնաց, կէսօրէն ետքը քնոփանաբար օրիորդը առանձին պիտի ըլլար տանը մէջ, մոռցանք ըսելու թէ մայրը շատոնց մեռած էր արդէն, ու պառաւ սպասուհի մը միայն կար։ Հազիւ թէ էտուար օրիորդին սենեակէն ներս մտնելով անոր ոտքերուն փարիլ կ'ուզէր, ոտքի ձայն մը լսուեցաւ դուրսը, օրիորդին բուն իսկ նշանածն էր, որ դուրսը սպասուհիին հետ կը խօսէր, այս վերջինն ալ երկու երիտասարդներուն միջեւ արինապից կռիւ մը նախատեսելով՝ կը դողար, առանց կրֆալ խմացնելու իր տիրուհիին, ու մուկի մը պէս անկիւն մը քաշուած՝ կը սպասէր գործին վախճանին։

Մարդ հրաշքներ կը գործէ նեղը մնացած վայրկեանին։

Օրիորդ X առանց պաղարկելութիւնը կորսնցնելու իսկոյն հազուստ կախելու յատկացուած մէծ դարան մը բանալով հոն մտցուց էտուարը և բանալին գրպանը դրաւ. ակնթարթի մը մէջ եղած էր այս գործողութիւնը։

Յետոյ իր նշանածը դիմաւորելով ըսկըսաւ. պատմել սապէս։

—Ախ սիրելի ձէյմս, չես կրնար երեւակայել թէ ինչ պատահեցաւ այսօր, սա մեր էտուարը իբր թէ զիս բռնաբարելու միտումով, քիչ մը առաջ հոս եկաւ, ես ալ դաւով մը սա դարանին մէջ մտցուցի ու բանալին ալ գրպանս է, սպասենք երեկոյն հայրս գալու ըլլայ նէ փառաւոր տիկոյ մը քաշենք, (աւելորդ է անշուշտ հոս նկարագրել էտուարի տագնապը, որ դարանին մէջ մտիկ կ'ընէր)։

Ձէյմս բարկութենէն կատղած էր։

—Ինչ համարձակութիւն, ինչ վատութիւն Աստուած իմ, տո՛ւր, շուտ տո՛ւր, սա բանալին, գոչելով ոտքի ելած էր արդէն, առնելու համար օրիորդին երկնցուցած բանալին, զոր խլածին պէս,

—Լատե՛ս, գոչեց աղջիկը, յաղթական ձեւով մը։

Ձէյմս ամօթահար, բանալին ձեռքէն նետելով, իսկոյն շուկայ վազեց, գնելու հաւմար այն աղամանդէ մատանին, զոր իր խաբուած վայրկեանէն իսկ գնելու պայման դրուած էր։

Էտուար քրտինքներու մէջ թաթխուած դուրս ելաւ դարանէն, իսկ քանի մը օր ետքը, տեղւոյն թերթերը ծանուցին աղջկան անվերադարձ մեկնումը Անգլիայէն, հետը ունենալով իր սիրական էտուարը։

Աւելորդ պիտի ըլլար ըսել թէ օրիորդը լաւ սերտած էր Պալզաքի Լատեար physiologie du mariageի մէջ, ըսի Տոքթորին։

Պուկուրլու։

Ս. ԽՈՐԷՆ

ՕՄԷՕԲԱԹԻ

Շատեր ձմրան այս եղանակին չկրնալով իրենց մարմինը լաւ պարտկել, տեսակ տեսակ հիւանդութիւններու կ'ենթարկուին, մանաւանդ ոտքերը։ Եթէ ոչ ամէն օր, գէթ օրընդ մէջ պէտք է լուալ, տաք ջրով, ճիշտ դէմքին պէս։ Առաւօտները, այսպէսով ոտքը տաք ջուրին մէջ՝ իրեն կը քաշէ հարկ անհրաժեշտ արիւնը, և պաղառութիւնը կ'արգիլուի այսպէսով։

ԱՌՏՆԻՆ ՄԱՏՄԱԶԵԼԸ

(ՕՐՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Ամէն ծնողքի փափաքն է իր զաւակը կրթել և ուսուցանել անոր այն ամէն բաները որոնցմէ զուրկ է ինք։ Ասիկա անուշ նախանձախնդրութիւն մըն է, գովելի յատկութիւն մը՝ որ գրեթէ ընդհանրացած պարտականութեան մը կարգ անցած է մեր ինչպէս ուրիշ ազգաց մէջ։

Այս գովելի նախանձախնդրութիւնը, պէտք է ըսել թէ, առաջ, այսինքն չըսեմ Նոյ Նահապետին, բայց Աւետիք պատուելիին ժամանակ միմիայն մանչերուն համար էր. (հոս երբ մանչ կ'ըսենք, սպասաւոր չըհասկցուի խնդրեմ, որովհետեւ մեր հայ-լայֆ շրջանակին մէջ այս մահճ անունը սպասաւորին կուտան, ինչպէս «այսօր մանչը Պոլիս զրկեցի, մանչ մը կուգենք կոր, մանչուն ամսականը ութը մէծիտ է հա») իսկ հիմա խնդիրը փոխուած, բարեշրջած, բարակցած, նաղիկցած և բիւրիւղ դարձած է. մանչերէն աւելի աղջիկներուն կողմն է ուժը և ահա ինչու բոլոր աղջիկ զաւակ տէրը ու տէրտը քաջողներ իրենց միակ ու միմիակ պարտականութիւն սեպած են աղջիկներն կրթել, որ թարգմանի քերպլիյէ ընել ոչ թէ հաւկիթով, այս սղութեանը, այլ բանիւ վարժուհիին և ուսուցչութեամբ վարժապետին։

Հաւատացէք սիրելիներս, աղջիկ զաւակներն աւելու կամ ծնելու տարի չէ ըստ իս։ Նախ ուսմունքի մտածումը, յետոյ թուալէթի ֆանթէզին, և այս բոլորին վրայ աւելցնել ծրար մը ոսկի, ձեռքէ հանելու, տեղաւորելու համար... c'est trop fort։

Օրուան միւսիւնները պահանջկոտ են, ի՞նչ ընենք։

Ամէն բանի մէջ և ամէն ատեն երեք (3) թիւը մեծ դեր խաղացած է, ինչպէս պատմութիւնը կը վկայէ, բայց ամուսնութեան մէջն ալ քիթը խոթելը իրաւ անտանելի է պէտք է ըսել։

1e. Գեղեցկութիւն,

2e. Ուսմունք,

3e. Դրամ։

Ահա երեք թիւին տուն տեղ քրքրելու չափ սոսկալի դերը։ Այսօր բոլոր ամուսնացու երիտասարդները առ երեք յատկութիւնները կը փնտռեն։ Բայց խնդիր է գիտնալ թէ իրաւունք ունի՞ն թէ չէ։ Այս մասին աղջկանց հայրերը բան մը չեն ըսեր, և իրենց լռութիւնը անէծք մը աւելի է, չմոռնամ ըսեմ։

Կուռնիկ աղա Սալարպաշեան վաճառականութեան մէջ իր յաջողութիւնը և հարստութիւնը ամուսնութեան շրջանակին ալ ժպտելով, չորս աղջկան տէր եղած է։ Քսանեհհինգէն մինչեւ տասնը չորս տարին երեւոյն մէջ տարուբեր, իրարմէ գեղեցիկ, լեցուն մարմնով ինչպէս և մտքով կրթեալ, այսինքն թէրպիյէլի ամէն մէկը մէկմէկ կուղովցու հաւկիթով, զորս խնայած չէր խեղճ հայրիկը Սալարպաշեան Կուռնիկ աղա։

Ինքը՝ ինչպէս իր կինը Շահիկ, հազիւ ստորագրութիւն մը դնել սովորած, իրենց չորս հրաշալիքներուն լալն մը պակաս չէին ըրած, այնպէս որ շնորհիւ տանը մէջ գիշերութիւն Գաղղիացի վարժուհիին, Գաղղիէն, Անգղիերէն, ձեւ, կար, դաշնակ եւ... սիրաբանութիւնը bien entendu! կ'լլած, մարտած էին ալ։

«Մալարպաշին չիչէկները» այս անունով կը ճանչցուէին անոնք, երբ փողոց ելլալին չորս տարուբեր գոյներով թուալէթ մը կ'ընէին, այնպէս որ դուռ դրացի երբ տեսնէին անոնց այդ գունագեղ անցքը «Ֆիստանին տային տէ բարեկենդանքին հագնէինք» ըսելով կը քաջքէին ու բոլոր լեզուները կ'երկարէին վրանին, մինչ Կուռնիկ ու Շահիկ անոնց ետեւէն սաղմոս կը քաջէին, օր, ժամ, վայրկեան, երկվայրկեան առաջ ձեռքէ հանելու, տեղաւորցնելու համար, փա-

փառ մը որ փափաք ըլլալէ դադարած սիրտ-
մաշուք մը, անշէջ կրակ մը, հուրք մը
դարձած էր ալ իրենց համար։

Բուրուլ, Նաղիկ, Նարդուկ և Վարդուկ,
չորս ծաղիկները ասոնք էին, գոնէ մէկեր-
նուն մէկը Յուսէփիկ մը ըլլա՛ր։... Իբրեւ
աքլոր Սալարոյաչեան հաւնոցին։

— Ինծի՛ նայէ Շահիկ, ան չէ ամա մի-
ւորները ո՛ւր են խաբարմիշ եղեր կէնէ,
մատմազէլն ալ չեմ տեսնար կոր։...

— Իրենց օտան ըլլալու են, որ սահաթ է
նստեր կը խօրաթուէին կոր Գաղիէվար։...

— Խօշ ատ ֆըլտըր կէօղն ալ աչքս չըռ-
նիւր կոր ամա նէ իսէ։...

— Լեզու պիտի սովորին ի՞նչ ֆայտա։...

— Ատ ծուռ լեզուն ալ բէք գործիս չի
գար կոր։...

— Աման կուռնիկ աղա, բէք մայմուն
իշտա՛յը բան ես... հիմաճուկ ատ լախըւ-
տրին տեղը կա՛ր... չօգ չէյ, հէլպէթ պի-
տի խորաթուին քի լեզունին խայի՛շ ըլլայ։

— Ես վազ անցայ, ատ ճատալոզ մատ-
մազէլը ինծի անանկ կուգայ քի, աղջիկնե-
րուն լեզուն խայտըմիշ ընեմ ըսելնիքէն,
օտքերնին խայտըմիշ պիտի ընէ։...

— Տահա բան կա՛յ նէ դուրս տուր, կէնէ
ապուխտուպուխտմիշ կ'ըլլաս կոր. խօշդ
չի՛ գար կոր, սանկ տէմդ կ'անցնին տէ պիւլ-
պիւլի պէս չա՛ֆ չա՛ֆ չաֆչաֆի, ճըվըռ
ճըվըռ կ'ընեն կոր նէ։...

— Գալի, քիպրիթ եանտըդտան սօզրա
գօգուսը չըգար, կըսեն. աս աղջիկներն ալ
ատ լեզուն սորվելուն ետքը չուլանը պի-
տի ելլան թերաղին ծառուընին տէ մենք
սէյիւրծի պիտի ըլլանք։...

— Վրանին բարի, ֆիտան զաւկըներս...
անոր համար քի, սանկ սոխախ մը կեկան
կոր նէ... տուռ դրացի ճամբը վար չը-
ռախ չուախ դուրս կը թափին կոր։...

Ու դեռ պիտի շարունակէին իրենց ծը-
նողական դիտողութիւնները՝ երբ չորս ծա-
ղիկները սենեակ մասն, ըստ ալաֆուանկա-
լին ցատքելով ցատկուսելով՝ իրենց մատ-
մազէլին թեւերը մտած։...

— Պօն սուառ բարա։...

— Սալիւ բարա։...

— Բարա։...

— Տօն մուա թա բաթ մօն բըլի բաբա՛.

Զատ դատ կը բարեւեն հայրիկը ու կար-
գաւ կ'անցնին կը նստին քանարէին վրայ։...

— Աղջիկներս, մենք ատ լեզուն ձեզի
սովորեցունք նէ ուրիշներու հետ խօրա-
թէք տէյի էր, ես չեմ հասկնար, սիրտ մի
հատցընէք։...

— Մէ բուռքուա՛ նօ... հայրիկ... օ...:

— Տէ՛, ծըլիկէնմիշ չըլլանք, ատ լեզուն
տուք ձեզի խօրաթուեցէք, հայտէ պօյերնիդ
տեսնամ։...

— Բա ճանըմ ձգէ քի աղջիկները բաց-
ուին քիշ մը, հասկնաս չհասկնաս թող աս
նոնք ճուռըսին։...

— Հայդիկս շատ չսիղեղ, ինչպէս կ'ըսեն,
լա լանկ ֆղանսէզ, ըսաւ մեծ աղջիկը, ո-
րուն բռաթիքը միւսներէն քիշ մը լաւագոյն
էր, ու կրկին խնդուքներու մէջ դուրս կել-
լան սենեակէն, մինակ ձգելով իրենց հայ-
րիկն ու մայրիկը։

— Ես քեզի բան մը ըսեմ Շահիկ, աս
մատմազէլ է ի՞նչ խառնախօսի է, ճամբու
պիտի դնեմ։...

— Տէր ողորմեայ՝ ըսէ... ինչո՞ւ... ի՞նչ
եղաւ կէնէ։...

— Ի՞նչ պիտի ըլլայ, շնայիս իրենց մօրե-
նական լեզուն պիլէ մոռցեր են տէ կէս
խուսուր կը խօրաթուին կոր։...

— Ամա՛ն... թող երթան մոռնան, հի-
մա ալաֆուանկայ է, հիշ դարար չունի. հէմ
ինծի՛ նայէ, ասանկ ֆիտանի պէս աղջիկնե-
րը մէկուն դիմացն ալ հանես տէ, պիւլպիւ-
լի պէս Գաղիէվար խօրաթուին նէ, շան մըն
է։...

— Էյ բէք աղէկ եա՛, հայտէ ըսենք քի
սովորեցան, աս մաթահները կարգել ուզենք
նէ Բարի՛զ պիտի տանինք։...

— Ա՛տ ի՞նչ խօսք է, զահէր հոս խըթը-
լը կայ։...

— Էյ հանենք տէ թիւճարի մը եախօտ
մէկու մը տանք նէ, գիտցած եղիր երկու
օրէն պօլսճանին առնեն վրանիս պիտի գան,
չիւնքիւ էրիկ կնիկ իրարու լեզու չպիտի
կրնան հասկնար։...

— Մենք ալ ատ լեզուն գիտցողին կու-
տանք, ի՞նչ ըսենք, տահա աղէկ։...

— Գուն ասանկ խուռմիշ կ'ընես կոր ա-

մա չէնք շնորհք հայերէն գիտցող մը պիլէ տահա դուռերնիս չչալեց . . . :

— Ծէսարէթ չեն ընեք կոր կուռնիկ աղա, դուն սապո ըրէ, ասանկ բանը թէզվարի չըլլար . . . :

— Ես չէի ըսողը, հայտէ նայինք, աս ալ քու բռնող էր, ետքէն ռիւշման ըլլաս նէ փարա մը չընէր, աս ալ ըսեմ տէ՛ կուռնիկը ըսաւ ըսէ :

Նոյն ատեն օրիորդները կրկին սենեակ կը մտնեն .

— Հայդիկ, ժը վու զանգղի, այսօր շուկայ պիտի եղթամք . . .

— Վախ վախ վախ, կիւզելիմ աղջիկները եօխ են եղեր . . .

— Ինչ է աղջիկս, ինչ կ'ուզես . . .

— Գիղքի մը անունը տամ ող աղնես . . .

— Շահիկ տուն հասկցիր տէ ինծի թարգմանէ նայինք, վրաս գէշութիւն կուգայ կոր . . . :

— Շատ պաղզ է հայդիկս, գիղքին անունը տամ գղէ՛, Լա Թեղ .

— Լաթերը ինչ պիտի ընէ քա Շահիկ, ինչի լաթ կ'ուզէ կոր . . . :

— Գիրքի անուն է եղեր ճանրմ. նա՛սը լաթ . . .

— Լա Թեղ . . . :

— Հա՛ . . . դե՛ղ . . . իլամ կ'ըսես կոր . . . ինչ ունիք, ինչ եղաւ, ատ իլամին համար գիրքը ինչ պիտի ընես, սա քէօշէյի էղածին կանչեցէք պէտք եղածը ընէ ըլլայ . . .

— Քա ճանրմ բո՛ւթ ես կտրեր կուռնիկ աղա՛, գի՛րք, գի՛րք, կարդալու գիրքերնուն անունը կ'ըսէ կոր, ո՛վ գիտէ վարժուն հին ապսպրեր է քի աղջիկներս բան սովորին տէյի, անանկ է եա՛ . . . անէքի Գաղիէվար վարժունի ետք բռներ նէ, պէտք է քի գիրքը բանը առնենք քի սովորեցունէ, սալթ խորաթայով կ'ըլլայ մի եա՛ . . .

— Ատ գիրքը որի՛ն չինածն է, քիթապահին հարցունէ նէ ինչ ըսեմ, ինչի տպիր է, քերականութիւն է, թուարանութիւն է, խառնախօսի է . . .

— Գիղքին օթէօղը, Էմիլ Զօլա, ախ . . . չեղ բարա սքանչելի գիղք է . . .

Խեղճ մարդը գիրքին անունը և հեղինակինը կ'արձանագրէ իր տետրակին մէջ, առանց գիտնալու թէ ինչ բանի կը ծառայէ այդ հատորը . . . :

Քիչ վերջը միւս աղջիկը ներս մտնալով,

— Ամա՛ն հայրիկս, գիրք մըն ալ ես ըսեմ տէ առ . . .

— Սըքոէթէտ աը լամուռ . . .

— Սըկոթէր չամո՛ւռ . . . բէք էյի . . . ա՛ս ուր կը ծախեն . . . :

— Նա՛սը չամուռ . . . ամո՛ւռ, ամո՛ւռ . . .

— Ատ շառխիին գիրքը հիմակուհիմայ ինչ պիտի ընէք, կէօղէրի մահմուռ ֆիլան, գործը ատտեղուանքը ելաւ, հա՛ . . . կը հաւնիս կոր եղածին Շահիկ, տահա տէվամ թող ընեն ծուռ լեղուն սովորինք տէյի, կարդալ գրել, բռաթիք ֆիլան ըսելնիքէն . . . շառխիի մանիի ելան նաղէնիմները . . . :

— Քա ճանրմ չես հասկնար կոր, կեցիր նայինք, թող մէյ մը տահա ըսէ անունը . . .

— Նամակի գիրք է հայրիկ, պզտիկ պըզտիկ նամակներ կան մէջը . . . :

— Բէք էյի, ատ է նէ գարար չունի պաղի պաղի ես ալ մեր միւշտէրիներուն նամակ գրել տալու ըլլամ նէ պէլքի մէջէն շուռութլու բաներ մը պէտքը կ'ըլլայ . . . ըսելով, այդ անունն ալ կ'արձանագրէ, ու հաղիւ աւարտած՝ Նարդուկ ներս մտնելով,

— Աման հայրիկս գրէ՛, գրէ՛ . . .

— Կեցիր ճանրմ, ինչ գրեմ . . . քիթապահին հետ օտթախ պիտի ըլլանք :

— Գրէ՛, գրէ՛, Լը սըքոէ տը լա Թուայիք :

— Ատ նալէթը ինչ պիտի ըլլայ, ա՛տ ինչ թէրթիպ է աղջիկ . . .

— Նալէթ չէ թուալէթ, թուալէթ . . .

— Էյ թամամ, հիմա ամէն բաներնիք լըմընցաւ սիւսերնուդ ալ գիրք կ'ուզէք կոր, հա՛ . . . Շահիկ կը հաւնիս կոր սա եղածներուն . . . կարդալ գրել ըսելնիքէն գործը նայէ ուր տեղուանքը հասաւ . . . :

— Քա ճանրմ ո՛վ գիտէ ատ գիրքին մէջէն ինչ պիտի սորվին, տուն ա՛ռ, ա՛ռ, ինչ կ'ըսեն կոր նէ գրէ տէ իրիկունը բեր, վարժունին ապսպրեր է պէլքի :

— Բօստալը սիւս պիտի ընէ տէյի գիրքը ե՛ս պիտի առնեմ . . .

Վերջապէս հետեւեալ առտուն կուռնիկ աղա ըստ սովորականին տունէն դուրս ելլալով, որպէս զի աղջիկներուն կամքը կատարուի, շիտակ գրաւաճառի մը կը դիմէ, զոր կը ճանչնար առաջուց :

—Բարի լուս բարեկամ, առտուանցով քեզի խայրը միւշտէրի մը...

—Բարի եկաք, աս ո՛ւր ես ճանըմ, հիշ գիրք միրք պէտքը չըլլար կոր, բան մը առած չունիս:

—Իշտէ առնեմ պիտի. նա՛, սա լիստան մէյ մը կարգայ տէ ի՞նչ գիրք ուղեր են նէ տուր նայինք, քանի՞ շրուշի բան է, կ'ըսէ, ու գրպանէն ցուցակը կը ներկայացնէ գրավաճառին:

Գրավաճառը, սանկ ակնարկ մը նետելէ վերջ, քիթին տակէն խնդալով մը կուռնիկ աղային երեսը կը նայի...

—Աստիք ո՞վ ապսպրեց, ո՞վ պիտի կարգայ...

—Աղջիկներունն է ճանըմ, ի՞նչ կայ, բէ՛ք սուղ է քի...

—... ..

—Ձե՛ս խօսիր կոր...

—Ի՞նչ խօսիմ... բարեկամս...

—Տէր ողորմեայ իշտէ կարգալու տայիր գիրքեր են, ունիս նէ տուր տէ քանի շրուշ է նէ տամ...

—Կուռնիկ աղաս, ես աս գիրքերը չպիտի կրնամ տալ, չիւնքիւ գիտես ես՝ միր բարեկամութիւնը շատ հին է, աստեղծէ մէկը եւրոպայի է՛ն բաց գրող, Զօլային մէկ է՛ն բացումանն է քի շիտակը ես պիլէ կը խպնիմ կարգալու...

—Է՛յ...

—Աս երկրորդն ալ, սիրահարական նամակներ սովորեցնող գիրք մըն է, սա քօռթէզանութեան նամակները ինտոր կը գըրւին նէ բիւթին մէջը կայ...

—Է՛յ... էյ...

—Ա՛ս ալ, մագերը ի՛նտոր շտկելու է, բուտան ի՛նտոր քսելու է, ձեռքերը աղւորցնելու համար ի՛նչ բուժամտայով շիտելու է նէ՛ ան գրուած է մէջը... Մեղք ես կուռնիկ աղաս, ասանկ բաներու փարս մի տար, հէմ ալ տուն մի տանիր:

—... ..

Հետեւեալ առաւօտուն կանուխ կուռնիկ աղայի տունէն դուրս կ'ելլար տիպար մատմաղէլը, մինչ վերէն պատուհաններու ետեւէն օրորողները ջերմապէս կուլային:

—Կուռնիկ աղա՛, աս եղա՛ւ, աղջիկները արունէն արցունք կը թափեն կոր...

—Ետքէն ես լալուս... հիմակուրնէ՛ անոնք թող լան, իմ պատիւս անոնց արցունքէն վեր է:

ԼԻԼԱ

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շփուիլ եւ աղամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կարասիներ կոկել ամէն կերպով, առանց քակնիդ պաշպելու

Ա. Յ. Լ.

Ա. ՊԱՌԻԿ

Մա՛յր ես, աղջկանց օժիտը կը մտածես՝ դիմէ՛... Օրիորդ ես, շիք և ածան հագուիլ կուզես՝ դիմէ՛... Երիտասարդ ես շիքը կը սիրես՝ դիմէ՛... Տարեց ես և ցուրտէն պատսպարուի՛ր կուզես՝ դիմէ՛... Տղաքներ ունիս, որոնց պիտոյքը գանկը կը ճամբեցնեն՝ դիմէ՛ Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգականերու պէտք ունիս՝ դիմէ՛ Եկածը կազանդ է, նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ՛... Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛ Ձեռքդ պարապ ճամբայ քայլելը չե՛ս սիրեր՝ դիմէ՛... Կուզես տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛... Առանցակարգ և սովորն գուրպաներու պէտք ունիս՝ դիմէ՛ Կուզես շիք, ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ունենալ՝ վերջապէս կուզես՝ ոտից ցզուխ հագուիլ, շքուիլ, պծնուիլ

դիմէ միմիայն

«ՀԷՐՃԱՅԻ» ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Մենք ՇՈՒԿԱՅ, Բույուժնուլար փողոց թիւ 13 ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի, ճերմակեղէնի, Փանթէզիի, աղամանդի, ժամացոյցներու, շղթաներու և ամէն տեսակ կարասիներու ճօխ մթերք մը:

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ դնողներու համար հարիւրին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը չաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ դնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդիայ գոհարեղէնները երգ գործածուած բայց անմնաս մնացած ըլլան, հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախուած և անմնաս մնացած միմիայն աղամանդիայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով ետ կ'առնուին:

ՍԱԼԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Ան ծովու ափանց հրսկայ Պոնոսին,
Առաջնորդական տեղապահն ալն,
Խաչատուրեան Սուրբ Հայրն Արիստիկոս
Որ դեռ նո՛ր կ'անցնի գրչի *fosafես*,
Կոչուած է իր նո՛յն պատգամով՝ խնուս,
Հովուելու մարդիկն անմեղակ, անուս,
Որոշմամբն արդար՝ Պատրիարքաւանի,
Թեւ ինք տեղէն շարժիլ վարանի:

Ամաքոնեակով մ'համես ու ածան,
Վարդապետք Տէր փոքրիկ Մեհրուժան,
Որ ժամանակէ մ'ի վեր խնուսին,
Մեր եկեղեցւոյ հոգեւն իր ուսին
Շաղկաւ կը տանէր, ջանով չարաչար
Եւ որ մը օրանց հոս չէ՛ր տեսնուար,
Դպրոցաց տեսուչ եղաւ Կարինի,
Հանդէպ իր կոչման գործ մ'ապօրինի,
Ըստ որում հունձներն այս Դպրեմանին,
Հոգեւոր գործոց պէտք է որ յանգին,
Թողլու համար գեթ... չորով մի շէտ հայ
Մեր խեղճ ու սքանկ Հայ վարժապետաց:

Բաղդին ետեւէն կո՛յր հետազօտիչ,
Զբոլաւեան Տէր Հայրն ալ սա Միւրսիչ,
Որ փակեղն առած շրջէր անդասան,
Ճամբայ ելեր է դէպ Հապետիսան
Իբրեւ հոգեւոր հովիւ այդ բեմին,
Մաղթենք որ հաստատ մընայ ի դրմին:

Դրամին չափ արտո՛վ ալ փարթամ արդէն
Ծանօթ՝ Յակոբեան Էֆենտին Մարքէն,
Որ զգացումով մ'ազնիւ ու բարի,
Բարեսիրական գործոց կը փարի,
Եւ ձեռնովն իր աջ, աղբասին ի սէր,
Տըւածը երբե՛ք ձախը չըլտեր,
Մէյմէկ ձեռք հագուստ, տկուն եւ ընտիր,
Խրման գիտելին, բախտեց անխրտիր
Էթ-Մէյսանիի դպրոցին, սիրուն
Բայց խեղճ, չբաւար երկսեռ սաներուն:
Ու քրտուտ մանկունք այլ նպատակով
Զրկաբեւալով բընաւին տակալ,
Ուրախութեան բուռն իրենց յուզումէն,
Ինչպէս կը գրէ քերթը Մանգուլմէն,
Համբուրեր են, ո՛հ, երիզներն անգին
Իրենց բնծայուած սիրուն գլխարկին:

Մեր Ս. Պատրիարք Հայրն որ անխափան,
Ամէ՛ն կիրակի, պերն, աստուածաբան,
Իր քաղաքներովն առա՛ն, հոգեբով,
Մեր իւրաքանչիւր Տօնից առիթով,
Իր հաւատացեալ ժողովուրդն հանուր,
Կը մըխիթարէ, բանիւք քաղցրալուր,
Եւ առանց երբե՛ք ապրելու դանդաղ,
Անխոնջ եւ ուրախ, շրջի քաղէ քաղ,
Պիտի պատարագ ընէ, հոգեծին,
Ս. Երեմիայեան մեծ եկեղեցին,
Եւ հոն քաղաք պիտի ալ ուսի,
Վաղն, իբրեւ մի տօն Հոգեգալուստի,
Քանգի Բերայի, չըմաղ, փափկասուն,
Ամբան մէջ կ'երթան վայրեր օրասուն,
Ինչպէս Բրիւնֆօ, շրջիլ paradis,
Ուր ձրմաւն տալուկն իրենց փարաթի:

Խաղաղիկ Տիրայր Վարդապետն արի,
Որ ձայն մը ունի քրտուն քնարի,
Եւ եկեղեցւոյն հայախալ՝ իրեն
Մէկն է ապահով մեծ պարծանքներէն,
Անչեղճ ու վրտմ հաւատալ մ'անեղ,
Սուրբ Մեծփաննոս եկեղեցւոյն մէջ,
Պիտի պատարագ ընէ վաղն առտու,
Ի հանգիստ անձին այն եւրիտան,
Բարադամեան մեծ Տիար Թորոսին,
— Երմաններն անոր երբե՛ք չը պակսին —
Որ վերաբերեց հիսնէ, գեղեցիկ
Թողին վարժարանն եւ արդ, քաղեցիք,
Կ'ուզեն իր մահուան քառասունին առիթ
Յարգել յիշատակն անոր եղանդի:

Աղբասաւորի համբաւով արդար,
Եւ կարօտեցոց հանդէպ հոգատար,
Բերայի Տիկնանց խուրճ մը փափկասուն,
Պատկանող շրջիլ հայ-չալֆի դասուն,
Բերա Բաշաի շէնքին մէջ փարթամ,
— Որուն հարկ չը կայ որ գովես կարդալ —
Պիտի սոյ պաշտ մ'Փետրուար Տին,
Ի նըպաստ կարօտ աղբասին, հեկին:

ԼՐԱԳՈՂ ԶԱՅՆԱՆՈՐԵԱՆ

Արտատպէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԱՆ
Պատկեր նստեալ Ն. 28

